Եվրոպական միություն

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Մամուլի ազատություն, տեղեկատվություն ստանալու իրավունք» ֆոտոցուցահանդես

Մասնակցության հրավեր

Մամուլի ազատության համաշխարհային օրը՝ մայիսի 3-ը նշանավորելու նպատակով Ինֆորմացիայի ազատության կենտրոնը՝ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի հետ համատեղ կազմակերպում է «Մամուլի ազատություն, տեղեկատվություն ստանալու իրավունք» խորագրով ֆոտոցուցահանդես։

Ցուցահանդեսին մասնակցելու համար խնդրում ենք ուղարկել լուսանկարներ և ծաղրանկարներ, որոնք Ձեր կարծիքով պատկերում են ազատ արտահայտվելու և տեղեկատվություն ստանալու իրավունքների իրականացումը։

Ներկայացված նյութերից մասնագիտական ժյուրին կընտրի լավագույնները՝ մայիսի 5-ին կայանալիք ցուցահանդեսում ցուցադրելու։

Ովքեր կարող են դիմել

Ցուցահանդեսին կարող են մասնակցել բոլորը՝ անկախ մասնագիտությունից։

Ինչպես դիմել

Դիմողներին խնդրում ենք մինչ 2014թ. ապրիլի 22–ը՝ ժամը 16:00-ը ներառյալ ուղարկել հետևյալը.

1. Անուն, ազգանուն և կոնտակտային տվյալներ (հեռախոսի համար և/կամ էլ. հասցե)
2. Առավելագույնը 5 լուսանկար/ծաղրանկար (3.35 mega pixel)
3. Տեղեկատվություն այն մասին, թե որտեղ է արված լուսանկարը կամ ծաղրանկարը, ում կողմից, ինչ կամ ով է պատկերված։

Լուսանկարները և ծաղրանկարները խնդրում ենք ուղարկել foicaphoto@gmail.com էլ. հասցեով կամ կարող եք դրանց էլեկտրոնային տարբերակները ներկայացնել Ինֆորմացիայի ազատության կենտրոն հետևյալ հասցեով՝ Բյուզանդի փողոց 1/3, 4-րդ հարկ, Երեւան։

Հարցերի դեպքում խնդրում ենք գրել ԻԱԿ-ին foicaphoto@gmail.com էլ. հասցեով կամ զանգահարել 560360 կամ 094700 974 հեռախոսահամարներով։